Կ Ա Ր Ծ Ի Ք
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Մխիթար Ժորայի Գասպարյանի «ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման հիմնախնդիրները և բարելավման ուղիները» թեմայով Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ժամանակակից հանրակրթության կառավարման մոդելների ուսումնասիրությունը ոչ միայն կարևոր է տեսական մակարդակում, այլև ունի բարձր քաղաքական, սոցիալական և տնտեսական նշանակություն: Վերջին տասնամյակներում, հատկապես, հետճգնաժամային զարգացման և տեխնոլոգիական վերակազմավորման պայմաններում, բազմաթիվ երկրներում հանրակրթական համակարգերը վերանայել են կառավարման ստանդարտ կառուցակարգերը՝ անցում կատարելով առավել ճկուն, ապակենտրոնացված և արդյունքահեն կառավարման մոդելների:

Հայաստանի Հանրապետությունում վերջին տասնամյակում իրականացված կրթական բարեփոխումները, հաստատություններից պահանջվող հաշվետվողականության բարձրացումը, պետական-հանրային կառավարման սկզբունքների ներդրումը, ուսուցիչների սերնդափոխության խորացող խնդիրները, ինչպես նաև համայնքային կառավարման համակարգի փոփոխություններն առաջացրել են նոր տեսական-մեթոդաբանական և գործնական հարցադրումներ: Դպրոցների կառավարման արդյունավետության, որոշումների կայացման կառուցակարգերի թափանցիկության, կառավարչական պատասխանատվության բաշխման և օրենսդրական դաշտի իրական կիրառելիության խնդիրները դարձել են առաջնահերթ ու հրատապ:

Հաշվի առնելով հանրակրթության ոլորտում կառավարման զարգացման ժամանակակից համընդհանուր միտումները, ինչպես նաև կառավարման մեթոդաբանության և մեխանիզմների բարելավման անհրաժեշտությունը՝ հանրակրթության կառավարման համակարգում ոլորտային հետազոտությունների իրականացումն ու որակական վերլուծությունն առանձնահատուկ կարևորություն են ստանում:

Գրախոսվող ատենախոսությունը նվիրված է վերոնշյալ հիմնախնդիրների համակողմանի ուսումնասիրության, հանրակրթության համակարգի առկա հիմնական կապերի ու ազդեցությունների բնույթի բացահայտման, ինչպես նաև դրանց հետ կապված արդյունավետ գիտագործնական լուծումների անհրաժեշտությամբ, որով էլ պայմանավորված է ընտրված թեմայի հրատապությունը և արդիականությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Ատենախոսության ***նպատակն է*** համակողմանիորեն ուսումնասիրել և վերլուծել Հայաստանի Հանրապետության հանրակրթության ոլորտում կառավարման արդի հիմնախնդիրները, բացահայտել դրանց առաջացման պատճառահետևանքային կառուցակարգերը, հասկանալ կառավարման ինստիտուցիոնալ և օրենսդրական առանձնահատկությունները, համակարգել միջազգային առաջատար փորձը և առաջարկել հանրակրթության կառավարման բարեփոխման հիմնավորված, գործնական և տվյալահեն ուղիներ:

Դրված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

Նպատակին համապատասխան աշխատանքում դրվել և վերլուծվել են հետևյալ ***խնդիրները***.

1. վերլուծել հանրակրթության դերը հանրային կառավարման համակարգում, բացահայտել դրա սոցիալ-քաղաքակրթական նշանակությունը և կապը պետության զարգացման ռազմավարական առաջնահերթությունների հետ,
2. ուսումնասիրել հանրակրթության կառավարման տեսական հիմքերը, դրանց մեթոդաբանական առանձնահատկությունները և միջազգային գիտական դաշտում ձևավորված մոտեցումները,
3. կատարել հանրակրթության կառավարման միջազգային փորձի համեմատական վերլուծություն, տարբեր երկրների օրինակով ընդգծել կառավարման մոդելների առավելություններն ու սահմանափակումները,
4. բացահայտել ՀՀ հանրակրթության համակարգի զարգացման առանձնահատկությունները՝ ներառյալ կառավարման ինստիտուցիոնալ կառուցվածքը, օրենսդրական հիմքերը, կրթական քաղաքականությունը, մարդկային ռեսուրսների դերը և ենթակառուցվածքների զարգացումը,
5. բացահայտել ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման հիմնական հիմնախնդիրները և դրանց պատճառահետևանքային շղթան, գնահատել դրանց ազդեցությունը կրթության որակի վրա,
6. վերլուծել կրթական բարեփոխումների ընթացքն ու դրանց գործնական արդյունքները, գնահատել իրականացված քաղաքականությունների արդյունավետությունը և համապատասխանությունը ժամանակակից զարգացման պահանջներին,
7. մշակել հանրակրթության կառավարման կատարելագործման և բարեփոխումների հիմնավորված ուղիներ, որոնք միաժամանակ ապահովում են ինքնավարություն, հաշվետվողականություն, արդյունավետություն և ներառականություն:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատության ընդհանուր ծավալը կազմում է 150 էջ՝ առանց հավելվածների:

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, կիրառման ոլորտները, ձևակերպված են հետազոտության նպատակն ու հիմնախնդիրները, տրված են հետազոտության առարկան և օբյեկտը, ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին՝ «Հանրակրթության ոլորտի կառավարման տեսամեթոդական հիմքերը» գլխում, քննարկվում են հանրակրթության դերն ու նշանակությունը հանրային կառավարման համակարգում, ինչպես նաև կատարվել է հանրակրթության կառավարման միջազգային առաջավոր փորձի համեմատական վերլուծություն:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ հանրակրթության ոլորտի զարգացման արդի միտումները» գլխում կատարվել է ՀՀ հանրակրթության ոլորտի զարգացման առանձնահատկությունների վերլուծություն, ինչպես նաև քննարկվել են հանրակրթության ոլորտի կառավարման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման բարեփոխումների հնարավոր ուղիները» գլխում վերլուծվել են ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման բարեփոխումների ուղիները, ինչպես նաև ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման բարեփոխումների ուղիները:

Ուսումնասիրության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը

Հետազոտության համար տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմք են ծառայել հայ և արտասահմանցի տնտեսագետների աշխատությունները, գիտական կազմակերպությունների մշակումները, տնտեսագիտական դասական և արդի տեսությունների հիմնադրույթները, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները և այլն:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվում է հետևյալ դրույթներով.

1) Մշակվել է ՀՀ հանրակրթության կառավարման նոր հայեցակարգային մոդել, որը միավորում է պետական կառավարման ուղղահայաց համակարգը, դպրոցների ինստիտուցիոնալ ինքնավարությունը, համայնքային մասնակցային կառավարման բաղադրիչները և հանրային հաշվետվողականության գործիքները:

2) Բացահայտվել են հանրակրթության կառավարման կառուցակարգերի և օրենսդրական դաշտի միջև առկա կառուցվածքային անհամապատասխանությունները և

արդյունքում պարզվել են այն համակարգային խզումները, որոնք արգելակում են դպրոցների ինքնավարությունը և նվազեցնում կառավարման արդյունավետությունը:
3) Մշակվել է հանրակրթության կառավարման արդյունավետության նոր ցուցիչային շրջանակ, մասնավորապես՝ աշխատանքում մշակվել են կառավարման արդյունավետության 5 չափելի խմբեր, որոնք մինչ այսօր բացակայում էին ՀՀ հանրակրթության կառավարման վերլուծություններում՝ ինստիտուցիոնալ կայունություն, մասնակցային կառավարման աստիճան, ֆինանսական արդյունավետություն և ռացիոնալ բաշխում, ինքնավարություն–հաշվետվողականություն հավասարակշռություն և կրթության որակի ու արդյունքների փոխկապակցում:
4) Իրականացվել է 2008-2024 թթ. հանրակրթության կառավարման տվյալների համակողմանի վիճակագրական վերլուծություն՝ նոր միտումների բացահայտմամբ: Ընդ որում, վերլուծությունը հիմնված է ոչ միայն ընդհանուր ցուցանիշների, այլ շարժընթացների փոխկապակցությունների և ինստիտուցիոնալ պատճառահետևանքային շղթաների վրա:
5) Ներկայացվել և հիմնավորվել են ՀՀ հանրակրթության կառավարման բարեփոխումների նոր, համակարգային և տվյալահեն ուղղությունները՝ ռազմավարական բարեփոխումների ամբողջական փաթեթը, որը հիմնված է միջազգային համեմատական փորձի, ինստիտուցիոնալ վերլուծության, վիճակագրական տվյալների և կառավարման նորացված մոդելի վրա:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսության 1.1. ենթահարցի 17-18 էջերում հեղինակն անդրադառնում է «Հանրային կառավարում» եզրույթին և մի շարք հանրային կառավարման սահմանումների ու տարրերի, սակայն թեև ատենախոսության թեման ունի **հանրա**կրթության կառավարման ուղղվածություն, վերոնշյալ հիմնահարցերին անդրադառնալը կարելի է դիտարկել ոչ նպատակահարմար կամ թեմայի շրջանակներից շեղում:
2. Ատենախոսության 1.2 ենթահարցում միջազգային փորձի վերլուծությունը որոշ չափով սահմանափակ է և հիմնականում ունի նկարագրական բնույթ: Ինչ վերաբերում է առանձին (հիմնականում՝ զարգացած) երկրների հանրակրթական համակարգի կառավարման փորձի օրինակներին՝ դրանք միշտ չէ, որ ներկայացվում են համեմատական վերլուծության ձևով: Տարբեր երկրների հանրակրթական կառավարման մոդելների համեմատությունը, ինչպես նաև երկրների, որպես ուսումնասիրության օբյեկտ, ընտրության հիմնավորումը (օրինակ՝ նախկին ԽՍՀՄ) հնարավորություն կտար հստակ բացահայտել այն տարրերը, որոնք կարելի է տեղայնացնել և կիրառել ՀՀ հանրակրթության համակարգում:
3. Էջ 47-ում անդրադառնալով ՀՀ հանրակրթության ոլորտի ռացիոնալիզացիայի հիմնական միջոցառումներին, այդ թվում՝ հանրակրթական դպրոցներում դասարանների խտության բարձրացմանը՝ մինչև 25-30 սովորողի մեկ դասարանում, դասարանների

թվի կրճատմանը, դպրոցների լուծարմանն ու միավորմանը (մարզերում), ուսուցիչ-ների թվաքանակի կրճատմանը և այլն, ատենախոսը չի ներկայացնում հիմնավոր վերլուծություններ, թե այդ հանգամանքը կամ 1 ուսուցչի հաշվով աշակերտների թվի աճը 11-ից մինչև 15 ինչպես է անդրադարձել կրթության որակի և աշակերտների կրթական մակարդակի անկման վրա:

4. Թեև ատենախոսության 54-59 էջերում JASP 0.3.17.0 վիճակագրական ծրագրի միջոցով կատարվել է ուսուցիչների սեռատարիքային խմբերին առնչվող տվյալների վերլուծությունը, այդուհանդերձ չեն վերլուծվել ՀՀ ՎԿ-ի կողմից ներկայացվող դրան առնչվող վիճակագրական տվյալները: Նախանշելով որոշ տարիքային խմբերում ուսուցիչների թվաքանակի անկման միտումները՝ չի կատարվել նաև դրանց անկման կանխման և պահանջարկի ու կադրային ներուժի գնահատման վերաբերյալ վերլուծություն:
5. Էջ 65-ում ատենախոսն անդրադառնում է Համաշխարհային բանկի 2021 թ.-ի Հայաստանի վերաբերյալ զեկույցին, ըստ որի՝ Մարդկային կապիտալի համաթվով (HCI) Հայաստանում դեռևս չեն արձանագրվել կրթական ծառայությունների որակի մակարդակով և հասանելիության աստիճանով պայմանավորված մարդկային կապիտալի և արտադրողականության բարձր ցուցանիշներ, սակայն այս համաթվերի շարքում չեն ներկայացվում և վերլուծվում Մարդկային զարգացման համաթվի (HDI) կրթական բաղադրիչը, Համաշխարհային մրցունակության համաթվի (GCI) հանրակրթությանն առնչվող տվյալները և այլն:
6. Ցանկալի կլիներ նաև, որ հեղինակն ատենախոսության մեջ ուսումնասիրեր Կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի դպրոցներին առնչվող բաղադիչը, քանի որ ենթակառուցվածքների դերը ՀՀ հանրա-կրթության համակարգի գրավչության տեսանկյունից ևս շատ կարևոր է, ինչպես նաև ենթադրում է, որ առանց վերջինիս, ինչպես նաև բարձր մակարդակի ուսուցիչների ժամանակակից մրցունակ հանրակրթական համակարգ ունենալն անհնար է:
7. Աշխատանքում օգտագործվում են մի շարք օտարալեզու տերմիններ, որոնց հայերեն համարժեքներն առկա են. ասպեկտ՝ տեսանկյուն, ռեգիոնալ՝ տարածքային, մեխա-նիզմ՝ կառուցակարգ, ֆորմալիզմ՝ ձևականություն, ցիկլ՝ պարբերաշրջան, դեֆիցիտ՝ պակասուրդ, սեկտոր՝ հատված, ինդեքս՝ համաթիվ և այլն: Աշխատանքը զերծ չէ նաև որոշ խմբագրական և տեխնիկական բնույթի թերություններից (էջ 21-ում գրված է Նկար 1, բայց վերջինս բացակայում է, բանաձևերը համարակալված չեն և այլն):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքն ու հետազոտության ընթացքում ստացված արդյունքների նշանակությունը և բացասական ազդեցություն չեն թողնում հետազոտության ընդհանուր գնահատականի վրա:

Մ. Գասպարյանի թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն, ամփոփ և գիտական պատշաճ մակարդակով կատարված հետազոտություն է: Ատենախոսը դրսևորել է մասնագիտական գիտելիքներ և վերլուծական ընդունակություններ, ինչի մասին վկայում են ինչպես ատենախոսությունը, այնպես էլ դրանում ստացված արդյունքները:

Ատենախոսության հիմնական դրույթներն ամփոփված են 8 գիտական հոդվածներում, իսկ սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսությանը: Հեղինակի կողմից մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները հիմնականում կարող են կիրառվել ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման հիմնախնդիրների լուծման և բարելավման ուղիների բացահայտման ժամանակ:

Այսպիսով՝ Մխիթար Ժորայի Գասպարյանի՝ «ՀՀ հանրակրթության ոլորտի կառավարման հիմնախնդիրները և բարելավման ուղիները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,
ՀՀ ՊԿԱ կառավարման ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝ Վ.Վ. Խաչատրյան

Վ.Վ. Խաչատրյանի ստորագրությունը հաստատում եմ.

ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ս.Հ. Պողոսյան

19.03.2026թ.